ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹՈՌՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ԱՐԱՐԱՏԻ

ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Հարությունի Գյուլամիրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կարապետի Կարապետյան**

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիդա Ժորայի Մովսիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 21-ին ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հունիսի 11–ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում ի հայտ են գալիս կրթության նոր խնդիրներ, որոնք թելադրում են դրանց լուծման արդիական ուղիների անհրաժեշտություն: Այսպես՝ եթե նախորդ դարի վերջերին դեռևս վերահսկելի էին աշակերտների բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքները, հասարակության տարբեր շերտերում համեմատաբար մաքուր էր խոսքը, վերահսկվում էր նաև հեռուստատեսության և մամուլի լեզուն, գոյություն չունեին համակարգչի միջոցով սոցցանցերով աշակերտների հաղորդակցման հնարավորությունները, ապա ներկայումս նշված բոլոր ուղղություններում խոսքի մաքրությունն աղավաղվել է ու, ամենակարևորը, հսկողության սահմաններից դուրս է եկել: Ստեղծված իրավիճակն առաջին հերթին խաթարում է նոր սերնդի հայեցի մտածողությունը, խանգարում նրա լեզվամտածողության ձևավորումը, աղավաղում նրա պատկերացումները լեզվական ճաշակի, խոսքի արտահայտման չափանիշների մասին. խաթարվում է ոչ միայն սովորողների բառապաշարը, այլև լեզվի ոճն ու մտածողությունը:

Արդի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նոր պայմանների պահանջով բավականին ակտիվացել են կյանքի տարբեր բնագավառների մի շարք ոլորտներ՝ գործարար կապեր, փաստաբանություն, գործարար հաղորդակցություն, շուկայաբանություն, ապահովագրություն, մանկավարժություն, բժշկություն և այլն, որոնց հիմքում են անձի հաղորդակցման ունակությունները, շփվելու կարողությունը, և որոնց ձևավորումը դժվար է պատկերացնել առանց լեզվի ճկուն և արհեստավարժ գործածության՝ հաղորդակցության, առանց հարուստ բառապաշարի, առանց պատկերավոր և համոզիչ խոսքի, որոնք հաջողության հասնելու և մրցունակ լինելու կարևոր գրավականներից են: Միաժամանակ մեդիակրթության արդյունքում ժամանակակից սովորողների ծանրակշիռ հատվածն աչքի է ընկնում ինքնատիպ մտածելակերպով, տեխնիկայի գերարագ զարգացող պայմաններում անհրաժեշտ տեղեկույթին տիրապետելու և արագ արձագանքելու կարողություններով և մեդիամշակույթով:

Ներկայումս աշխարհաքաղաքական բազմակողմանի նորագույն փոփոխություններն անդրադառնում են բոլոր բնագավառներին, մասնավորապես կրթական համակարգին: Բոլոնյան գործընթացին ինտեգրվելը, ՏՀՏ-ների լայն ներդրումն ու կիրառումը հասարակական կյանքում, ինչպես նաև կրթական համակարգում, շարունակական և ողջ կյանքում սովորելու անհրաժեշտության ըմբռնումը նոր մարտահրավերներ են առաջադրում բարձրագույն կրթության, մասնավորապես մանկավարժական կրթության համակարգին՝ նոր հնարավորություններ ընձեռելով ինչպես սովորողներին, այնպես էլ դասավանդողներին:

Ժամանակակից կրթությունը դժվար է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Դրա վառ ապացույցն է այն, որ պայմանավորված ներկայիս աշխարհաքաղաքական և համաշխարհային առողջապահական խնդիրներով՝ կրթական հաստատություններում դասագործընթացը կազմակերպվում է նաև առցանց հիմունքներով: Այդ սրընթաց փոփոխությունների արդյունքում մշակվում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման մեթոդաբանությունը՝ նպաստելով ուսուցման գործընթացում դրանց արդյունավետ ներդրմանը և կիրառմանը, միասնական կրթական համակարգի նպատակների իրականացմանը: Ուսումնասիրությունների ընթացքում մասնավորապես կարևորել ենք ՀՀ-ում իրականացրած հետազոտությունները (Աստվածատրյան Մ. և ուր., 2004, Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, 2005, Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոն, 2015), ինչպես նաև արտասահմանցի մի շարք հեղինակների աշխատությունները (Tarp R., Gallimore R., 1988, Donato R., 1994, Wells G., 1999, Swain M., 2000, Lantolf J., Thorn S., 2006, Kao P., 2010):

Անձի հաղորդակցական կարողության ձևավորման գործընթացում կարևորագույն դեր ունի մայրենի լեզվի տիրապետումը՝ որպես ազատ և նպատակային հաղորդակցվելու, սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառներում խոսքային արհեստավարժ գործունեություն ծավալելու, հանրային կյանքի զանազան ոլորտներում տեղեկատվական հոսքին արագ արձագանքելու միջոց: Պատահական չէ, որ ըստ

ՀՀ կրթակարգի պահանջների՝ հանրակրթական ոլորտում կարևորվում է ապագա անհատի ու քաղաքացու արժեհամակարգի, ազգային և համամարդկային հոգեկերտվածքի և ազգային նկարագրի ձևավորումը: Այս համատեքստում, բնականաբար, բացառիկ է մայրենի լեզվի դերը. որպես նորի կրող՝ անձն իր գիտելիքները, կարողություններն ու հմտությունները հասարակության մեջ, տարբեր բնագավառներում իրացնում է իր մայրենիին խորությամբ տիրապետելու, հարուստ բառապաշար ունենալու միջոցով:

Այսպիսով, մեր հետազոտության *արդիականությունը* պայմանավորված է ժամանակակից սերնդի հաղորդակցական կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ և այդ համատեքստում սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ իրականացվող աշխատանքի բովանդակության և մեթոդների կատարելագործմամբ:

Հետազոտության նպատակն է մայրենիի դասագործընթացում ուսումնասիրել կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման հնարավորությունները և մշակել ու տարրական դասարանների ուսուցման գործընթացում ներդնել կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանն ուղղված մեթոդական արդյունավետ համալիր:

Հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում սովորողների բառապաշարի հարստացման գործընթացն է:

Հետազոտության առարկան տարրական դասարանների աշակերտների բառապաշարի հարստացման մեթոդական համակարգն է մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների, թեմատիկ բառաշարքերի շուրջ աշխատելու ճանապարհով:

Հետազոտության գիտական վարկածը

Մեր մշակած մեթոդական համալիրի կիրառումը կնպաստի տարրական դասարանների աշակերտների ակտիվ բառապաշարի շարունակական հարստացմանը, եթե՝

ա) կրթության բոլոր օղակներում մայրենիի ուսումնասիրման գործընթացում կատարվեն արմատական փոփոխություններ, մասնավորապես մայրենիի ուսուցումը դառնա առավել գործնական,

բ) մշակվի և մայրենիի դասագործընթացում կիրառվի դասագրքերի բնագրերի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համակարգ,

գ) բնագրերի բառապաշարի ուսումնասիրությունն ընթանա ծրագրով նախատեսված լեզվական նյութի դիտարկմանը համընթաց՝ որպես բնագրի դիպաշարի, գաղափարի ընկալմանն օժանդակող և բառապաշարը հարստացնող համակցված միջոց:

Նշված նպատակն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Բացահայտել, դասակարգել և վերլուծել սովորողների՝ հայրենական ու արտասահմանյան գիտամեթոդական գրականության մեջ ներկայացված բառապաշարի զարգացման մեթոդիկայի տեսական և գործնական հիմքերը:
2. Մշակել, փորձարկել և մայրենիի ուսուցման գործընթացում ներդնել սովորողների բառապաշարի հարստացմանը նպաստող այն հիմնական դրսևորումներն ու զարգացման մեխանիզմները, որոնք կիրառելի կլինեն տարրական դպրոցում և կնպաստեն գործընթացի արդյունավետությանը:
3. Բացահայտել կրտսեր դպրոցականների խոսքի թերությունները, խոսք կառուցելու դժվարությունները, բացահայտել դրանց պատճառները:
4. Մշակել, փորձարարությամբ հիմնավորել և ներդնել կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում աշակերտների բառապաշարի հարստացմանը նպաստող վարժությունների համակարգ:
5. Ամփոփել բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ուղղությամբ իրականացրած մեր գիտափորձերի արդյունքները, մշակել հետագա աշխատանքի գիտատեսական հիմքերը, ներկայացնել մեթոդական երաշխավորություններ:

Հետազոտության մեթոդաբանական *հիմքեր* են ծառայել կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման, հաղորդակցական կարողությունների զարգացման, լեզվական նյութի և բառակազմական վերլուծությունների ու բառի ձևաիմաստային խմբերի իմացության, բառը խոսքում ճիշտ և տեղին գործածելու կարողության ձևավորման վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ

արտասահմանյան ավանդական և արդիական մեթոդական հայեցակարգերն ու տեսությունները: Մեր հետազոտության հիմնախնդրի շրջանակներում կատարված հետազոտության համար էական նշանակություն են ունեցել Ս. Գյուլբուդաղյանի, Ժ. Կոնդակչյանի, Ս. Գալստյանի, Ա. Տեր-Գրիգորյանի, Ջ. Գյուլամիրյանի, Ռ. Խարազյանի, Մ. Միրումյանի, Տ. Դյակոնովայի, Տ. Լադիժենսկայայի, Ն. Ռոժդենստվենսկու, Տ. Ռամզաևայի, Մ. Լվովի, Ն. Սվետլովսկայայի և Տ. Պիչե-Օոլի ուսումնասիրությունները, դրանցում առաջադրված գաղափարները, տեսակետները, դրույթները, դասակարգման ու վերլուծության եղանակները, մեթոդական երաշխավորությունները:

Հետազոտության մեթոդները

Առաջադիր խնդիրների լուծման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

1.**Տեսական**. ատենախոսության հիմնախնդրին վերաբերող լեզվաբանական, մանկավարժամեթոդական, հոգեբանական գրականության, պետական կրթական փաստաթղթերի, մայրենիի դասագրքերի ուսումնասիրություն և վերլուծություն:

2. **Էմպիրիկ՝**

ա. դիտում. հիմնախնդրի ուղղությամբ անհրաժեշտ տվյալների, փաստերի հավաքագրում, առկա փորձի վերլուծություն, արդյունքների դասակարգում,

բ. դասալսումներ՝

- զրույց. դպրոցների տարրական ուսուցման մեթոդական միավորումներում ուսուցիչների, աշակերտների, նրանց ծնողների հետ հարցազրույցներ, սովորողների բառապաշարի հարստացման շուրջ կատարված աշխատանքների վերլուծություն և գնահատում,
- թեստավորում. հարցախույզի ճանապարհով գիտափորձին մասնակցած աշակերտների բառապաշարի նախնական իմացության մակարդակի որոշակի թեմատիկ բառախմբերի բացահայտում, այդ ուղղությամբ ուսուցիչների գործունեության ձևերի ու եղանակների հստակեցում,
- փորձարկում. գործնականում բացահայտվել է տարրական դասարանների աշակերտների բառապաշարի հարստացմանը նպաստող՝ մեր մշակած վարժությունների մեթոդական համալիրի արդյունավետությունը:

3. **Վիճակագրական**. Ms Exel և SPSS 6.0 ծրագրային փաթեթի կիրառմամբ իրականացվել է փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը.

➢ Մշակվել, փորձարկվել և ուսուցման գործընթացում ներդրվել է մայրենի դասագրքերում զետեղված ուսումնական բնագրերի շուրջ աշխատանքի ընթացքում կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման շարունակականությունն ու արդյունավետությունն ապահովող մեթոդական համալիր, որը կիրառելի է ինչպես տարրական, այնպես էլ հիմնական և ավագ դպրոցներում:

➢ Կրտսեր դպրոցականների համար մշակվել և ներդրվել են մասնավորապես գործողություն ցույց տվող բառերից խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորմանն ուղղված վարժությունների համալիր:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Ուսումնասիրվել և արդի մոտեցումների տեսանկյունից նորովի վերլուծվել են հայ և արտասահմանյան մեթոդամանկավարժական գրականության, ինչպես նաև կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման արդյունավետ նոր մոտեցումների մեթոդաբանությունը:
- Մշակվել և փորձարկվել են տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի ուսումնասիրման հնարավորությունները սովորողների բառապաշարի հարստացման տեսանկյունից:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության նյութերը և մշակված երաշխավորությունները կարող են կիրառվել՝

ա) ուսուցիչների կողմից տարրական դասարանների՝ կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում,
բ) դասագրքաստեղծ մասնագիտական խմբերի և մեթոդիստների կողմից՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև տարաբնույթ գիտական ուսումնասիրությունների ընթացքում,
գ) մանկավարժական բուհերի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների դասախոսների, ուսանողների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների կողմից:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են կիրառված հիմնադրույթների գիտականությամբ, փորձարարությանը մասնակից սովորողների քանակի լայն ընդգրկվածությամբ և հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաստիությամբ:

Հետազոտության կազմակերպման հիմնական փուլերը

Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով:

Առաջին փուլում (2011-2013) ուսումնասիրել, դասակարգել և վերլուծել ենք կրտսեր դպրոցականների՝ հայրենական ու արտասահմանյան գիտամեթոդական գրականության մեջ ներկայացված բառապաշարի զարգացման մեթոդիկայի տեսական և գործնական հիմքերը, հստակեցրել ենք հետազոտության նպատակը, որոշել ենք մեր ուսումնասիրությունների առարկան, ելակետային դրույթները, խնդիրները, դասակարգել գիտափորձերն անցկացնելու մեթոդներն ու տեխնոլոգիաները, ուղենշել ընթացքը, ընտրել հետազոտության բազան:

Երկրորդ փուլում (2013-2015) փորձարարական դպրոցներում մեր հետազոտության հիմնախնդրի շրջանակներում իրականացրել ենք հետազոտության խնդիրներին ու նպատակներին համապատասխան դասալսումներ, ինչպես նաև փորձարկել ենք մեր մշակած մեթոդական սկզբունքների, հնարների և երաշխավորությունների համակարգը:

Հստակեցրել ենք մեթոդների և մեթոդական հնարների ընտրության հիմնավորումները՝

1. ապացուցել՝ առաջարկած մեթոդները որքանով են վերալրացնում իրար, և արդյոք դրանք բավարա՞ր են սովորողների բառապաշարը հարստացնելու համար,
2. որքանով են դրանք անհրաժեշտ և բովանդակային,
3. որքանով են նպաստում սովորողների խոսքի զարգացմանը:

Երրորդ փուլում (2015-2017) ամփոփել ենք բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ուղղությամբ իրականացրած մեր փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, համակարգել ձեռք բերած գիտատեսական դրույթները, մշակել ենք մեթոդական երաշխավորությունները և շարադրել ատենախոսությունը:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումն իրականացվել են Երևանի Պուշկինի անվան հ. 8, Ա. Նավասարդյանի անվան հ. 196, Գ. Չաուշի անվան հ. 189 դպրոցներում, ԵՊԲՀ ֆակուլտետներում: Ուսումնասիրությունների ընթացքի և արդյունքների մասին հաղորդումներով հանդես ենք եկել ՀՊՄՀ Աշ. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնների նիստերում, գիտական համաժողովներում, ամսագրերում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Տարրական դպրոցի մայրենիի ծրագրով նախատեսված լեզվական իրողությունների ուսումնասիրման արդյունավետ մեթոդական համալիրի ներդրումը կարևոր նախապայման է կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ճանապարհով սովորողների բառապաշարի շարունակական հարստացումը փուլ առ փուլ կազմակերպելու համար:
2. Հասարակական-տնտեսական փոփոխություններով և գիտատեխնիկական արդի առաջընթացով պայմանավորված՝ անհրաժեշտ է սովորողների բառապաշարի շարունակական հարստացումն ապահովող թեմատիկ բառաշարքերի արդիականացում՝ ապահովելով տարրական դասարաններում ուսումնասիրվող բոլոր առարկայական դասընթացների բովանդակության յուրացումն ու ձեռքբերումների ներդրումները:

3. Սովորողների բառապաշարի հարստացմանը և խոսքի զարգացմանը միտված մեր մշակած վարժությունների համակարգը և մեթոդական երաշխավորությունները կնպաստեն կրտսեր դպրոցականի լեզվամտածողության ձևավորմանը, ակտիվ բառապաշարի հարստացմանը և խոսքի զարգացմանը:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից, 7 ենթաբաժիններով հավելվածներից: Այն պարունակում է 11 աղյուսակ, 25 տրամագիր, 2 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը 164 համակարգչային էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության փուլերը, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին՝ «Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը»** վերնագրով գլխի առաջին՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդական սկզբունքների պատմատեսական նախադրյալները»** վերնագրով ենթագլխում վերլուծել ենք հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի զարգացման պատմատեսական նախադրյալները Մաշտոցից մինչև Պաղտասար Դպիր, անդրադարձել ենք 5-18-րդ դարերում հայերենի ուսուցման մեթոդների մեկնաբանություններին՝ նշելով, որ, այնուամենայնիվ, աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացը դեռևս հեռու էր բավարար լինելուց:

Երկրորդ՝ **«Հիմնախնդրի դրվածքը հայ և արտասահմանյան մեթոդիկայում»** վերնագրով ենթագլխում անդրադարձել ենք հայ մանկավարժության մեջ սովորողների բառապաշարի հարստացման մեթոդիկայի պատմատեսական զարգացմանը, այն մեթոդներին ու խնդիրներին, որոնք մեթոդիստ-մանկավարժների ուշադրությունը գրաղեցրել են՝ սկսած 19-րդ դարից մինչ օրս՝ Խ. Աբովյան, Գ. Էդիլյան, Ղ. Աղայան և այլք, որոնց փոխարինելու եկավ 1960-ականների սերունդը՝ Ս. Աբրահամյան. Ա. Տեր-Գրիգորյան, ապա նաև Ջ. Գյուլամիրյան, Ռ. Խարազյան և ուրիշներ, որոնք, օգտագործելով ավագ սերնդի հսկայական փորձը, առաջադրեցին սովորողների բառապաշարի հարստացման ուրույն և արժեքավոր լուծումներ:

Անդրադարձել ենք նաև ռուս մեթոդիստ-մանկավարժների՝ Ն. Ռոժդենստվենսկու, Տ. Ռամզաևայի, Մ. Լվովի, Ն. Ն. Սվետլովսկայայի և այլոց՝ սովորողների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման ուղղությամբ առաջարկած մեթոդներին և ուղիներին:

Երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործընթացը ժամանակակից տարրական դպրոցում»** վերնագրով ենթագլխում դիտարկել ենք ժամանակակից տարրական դպրոցում սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ կիրառվող մեթոդներն ու մեթոդական հնարները, գործնական ճանապարհով լեզվական իրողությունների ուսուցման արդյունավետ ուղիները, տարրական դասարաններում ներդրված մանկավարժական աշխատանքի պլանավորման նոր մոտեցումները և այս համատեքստում մեր մշակած վարժությունների համակարգի կիրառման արդյունավետությամբ հիմնավորել ենք, որ անհրաժեշտ է վերանայել կրտսեր դպրոցականի բառապաշարը տարաբնույթ աշխատանքներով հարստացնելու ուղիները և լրամշակել ենք բառային աշխատանքի քայլաշարի մոդելը՝ հատկապես կարևորելով նորաձանոթ բառերի՝ որպես ակտիվ բառապաշարի հարստացման միջոցի անմիջապես գործածումը կապակցված խոսքում:

Վերլուծելով սովորողների բառապաշարի մեթոդիկայի զարգացման պատմությունը՝ նկատում ենք, որ բառերի քանակի յուրացման մոտեցումը փոխվել է խոսքակազմական բառապաշարի հստակեցմամբ, այսինքն՝ սովորողների բառապաշարի հարստացման գործընթացում ներկայումս կարևորվում է բառիմաստների ըմբռնումն ու յուրացումը և միաժամանակ դրանց՝ խոսքային տարբեր միավորներում գործածումը: Վերջնարդյունքը, անշուշտ, կապակցված խոսքում գործածումն է: Սա խիստ կարևոր հանգամանք է, և նպաստում է բառիմաստի արագ և գիտակցական բացահայտմանն ու

յուրացմանը:

Մասնավորապես կարևորել և հիմնավորել ենք սովորողների նվազագույն բառապաշարը հարստացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքներում թեմատիկ բառաշարքերի մշակումը, խոսքային տարբեր միավորներում կիրառումը, թեմատիկ բառաշարքերի բառամթերքով վարժությունների համակարգի ներդնումը՝ համոզված լինելով, որ կրտսեր դպրոցականների շրջանում միայն գործնական վարժություններով և աշխատանքի շարունակականությամբ է պայմանավորված դրական վերջնարդյունքը: Հատուկ նպատակով մեր իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք, որ աշակերտները հատկապես դժվարանում են գործածել այն բառերը, որոնց հայերեն տարբերակները առօրյայում կա՛մ քիչ են գործածվում, կա՛մ գրեթե չեն գործածվում: Ուստի՝ բառիմաստների բացատրության ընթացքում աշակերտների բառապաշարն ակտիվացնելու և խոսքում կիրառելի դարձնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ներառելու բնագրին համապատասխան օժանդակ բառերի թեմատիկ շարքեր:

Երկրորդ՝ **«Բնագրի շուրջ աշխատանքը՝ որպես սովորողների բառապաշարի հարստացման արդյունավետ մեթոդական բաղադրիչ»** վերնագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ **«Բնագրի հենակետային բառերի դիտարկման մեթոդիկան՝ որպես բառերը գիտակցորեն ըմբռնելու և յուրացնելու ուղի»** վերնագրով ենթագլխում անդրադարձել ենք տարրական դասարաններում գործող մայրենիի դասագրքերի բնագրերում առկա նորածանոթ և թեմատիկ բառաշարքերի շուրջ բառային աշխատանքի արդյունավետ ուղիներին, ուսումնասիրել ենք մայրենիի և դասավանդման այլ առարկաների դասագրքերում առկա թեմատիկ խմբերը («ծառեր», «բույսեր», «ծաղիկներ», «կենդանիներ», «կենդանիների խմբեր», «թռչուններ», «մրգեր» և այլն) և 2-րդ դասարանում փորձարարությունն իրականացրել «Ծաղիկներ» թեմատիկ բառաշարքի շուրջ: Մեր դասալսումների և փորձարարական աշխատանքների ընթացքում թեմատիկ բառաշարքերի շուրջ ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել ենք, որ անգամ բարձր դասարանցիների, նույնիսկ ուսանողների բառապաշարը որոշ առումով սահմանափակ է: Բազմաբնույթ դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքնում հանգել ենք այն եզրակացության, որ մայրենիի դասագրքերի բնագրերի վերնագրերից հետո շահեկան է զետեղել «Հենակետային բառեր» ենթակետը, որում ներառվի տվյալ բնագրին վերաբերող առանցքային բառախումբը, ընդգրկվեն կա՛մ նորածանոթ, կա՛մ որևէ թեմատիկ խմբին պատկանող բառեր, իսկ տարաբնույթ վարժություններն ու առաջադրանքները մեծ մասամբ կազմված լինեն «հենակետային բառերի» շուրջ:

Այս ենթագլխում հիմնավորել ենք տարրական դասարանների սովորողների համար նախատեսված թեմատիկ բառախմբերի և «հենակետային բառերի» շուրջ մեր մշակած և ներդրած վարժությունների համակարգի կիրառման արդյունավետությունը, բացահայտել ենք, որ այս ճանապարհով ավելի դյուրին է իրականացվում բառիմաստների գիտակցորեն յուրացումը, ըմբռնումը, որոնք էլ նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանը (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Հենակետային բառերի ուսումնասիրման քայլաշարը



Երկրորդ՝ **«Հոմանիշների և հականիշների ուսումնասիրման մեթոդիկան բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում»** վերնագրով ենթագլխում անդրադարձել ենք բառապաշարի հարստացման տեսանկյունից լեզվական-քերականական նյութը բառերի ձևաիմաստային տեսակների տարբերակման աշխատանքով զուգորդելու անհրաժեշտությանը: Մեր փորձարարական աշխատանքների և դասալսումների ընթացքում համոզվեցինք, որ բառերի ձևաիմաստային խմբերի շուրջ գործնական աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ աշակերտը տվյալ բառի նույն, մոտ կամ հակառակ իմաստի գործածությունը դիտարկի խոսքի համատեքստում, հատկապես *ածական+գոյական, մակբայ+բայ* ձևաբանական կաղապարներով բառակապակցություններում, որով էլ նա ձեռք է բերում բառի դիպուկ գործածության, ոճական կիրառության, այս կամ այն հոմանիշն անհրաժեշտաբար, ճիշտ և տեղին գործածելու կարողություններ: Բառիմաստի յուրացումը թե՛ մտածական, թե՛ ճանաչողական, ապա նաև խոսքաշարում դրսևորման գործընթաց է, ուստի այն սկզբնապես պետք է բացահայտել հաղորդակցման միջոցով, քանի որ բառիմաստի յուրացումը դրսևորվում է հենց հաղորդակցվելու պահին հարցուպատասխանի, երկխոսության, դասանյութը պատմելու ճանապարհով: Ուստի՝ հաշվի առնելով մեր իրականացրած փորձարարական աշխատանքների նպատակը՝ մենք մշակել ենք և 2-րդ դասարանում փորձարկել հոմանիշ-հականիշ բառազույգերի վերաբերյալ վարժությունների համակարգ, որը կարելի է իրականացնել «Մայրենի 2» [Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, 2008] դասագրքի բնագրերի շուրջ աշխատանքի ընթացքում: Վարժությունների նպատակը. սովորողը պիտի կարողանա՝

1. ճանաչել և խմբավորել հոմանիշ և հականիշ բառազույգերը,
2. ճանաչել հոմանիշ բառերի սաստկացումն ըստ իմաստի և դրանք ճիշտ գործածել նախադասություններում,
3. հատկանիշ ցույց տվող բառազույգի յուրաքանչյուր բառի համար իմաստով ճիշտ առարկա կամ գործողություն ցույց տվող բառ ընտրել՝ կազմելով գոյականական և բայական բառակապակցություններ,
4. զանազանել այն դեպքերը, երբ հոմանիշ բառերը նույն նախադասության մեջ հնարավոր չէ փոխարինել մեկը մյուսով, այսինքն՝ գիտակցել դրանց ոճական-կիրառական նշանակությունը:

Այսպիսով՝

դասագործընթացի խթանման փուլ → ապահովել բառիմաստի գիտակցումը
↓
իմաստավորման փուլ → համապատասխան վարժությունների միջոցով ապահովել բառիմաստի յուրացումը
↓
Հոմանիշային և հականիշային իմաստ արտահայտող բառերը բառակապակցություններում, նախադասություններում, կապակցված խոսքում ոճականորեն ճիշտ գործածելու կարողությունը վերածել հմտության:

Երրորդ՝ **«Բառակազմական վերլուծությունները՝ որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման արդյունավետ մեթոդ»** վերնագրով ենթագլխում սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ մեր փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությամբ բացահայտել ենք, որ կրտսեր դպրոցականի բառակազմական ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ է այդ ուղղությամբ աշխատանքն սկսել արմատի և բառի մասին նախնական գիտելիքների ձեռքբերումից՝ դրանք ամրապնդելով սովորողների մտավոր գործունեությունն ակտիվացնող խառնագրերի, բառակազմական կաղապարային վերլուծության վարժություններով:

Հիմնավորել ենք, որ տարրական դասարաններում որպես բառապաշարի հարստացման միջոց շահեկան է բառակազմական կաղապարներով (*ածանց+արմատ*, *ածանց+ա+արմատ*, *արմատ+ածանց*, *արմատ+ա+ածանց*, *ածանց+արմատ+ածանց*, *ածանց+ա+արմատ+ածանց*) աշխատանքն ընդհանրապես, իսկ ածանցավոր բառերի կաղապարային վերլուծության շեշտադրումը մասնավորապես. կաղապարային եղանակով բառակազմական վերլուծությունները նպաստում են աշակերտների կողմից

իմաստաարտահայտիչ ածանցների ճանաչմանը, բառիմաստի յուրացմանը, բառակազմական ունակությունների դրսևորմանը, խթանում են արագ մտածելու ունակությունը, զանազան արմատներ և ածանցներ յուրացնելու և կիրառելու կարողությունը, մշակվում են գրագետ գրելու, ածանցը վերջավորությունից տարբերելու և դրանք ըստ նշանակության գործածելու կարողությունները: Մայրենիի դասագրքերի բնագրերում առատ է ածանցավոր բառերի գործածությունը, և որպեսզի բացահայտենք, թե տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի գեղարվեստական բնագրերում սովորողները քանի ածանցի են առնչվում, մենք այս գլխում ներկայացրել ենք դրանց համամասնությունը:

Որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց՝ մենք կազմել ենք նաև 2-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերի բնագրերում գործածված ածանցավոր բառերի ցանկեր՝ ըստ նախածանցների և վերջածանցների, ըստ ձևաիմաստային խմբերի՝ համանուն, հոմանիշ, հականիշ ածանցների: Հիմնավորել ենք, որ դրանք կօգնեն ուսուցչին աղյուսակներից իմանալու, թե սովորողը ո՛ր ածանցներից կազմված բառերին է առնչվում, ուսուցչի օգնությամբ սովորողները կծանոթանան քննարկվող յուրաքանչյուր ածանցի իմաստակիր արժեքին, բառակազմական աշխատանքներ կազմակերպելու հնարավորություն կընձեռվի՝ վերջնարդյունքում դյուրին դարձնելով ածանցավոր բառերի իմաստների գիտակցորեն ըմբռնումն ու յուրացումը, ապա՝ կապակցված խոսքում դրանց գործածումը: Ներկայացրել ենք նաև բառակազմական աշխատանքի մեթոդական քայլաշարը՝ կարևորելով այն, որ յուրաքանչյուր քայլ, վերալրացնելով մեկը մյուսին, անհրաժեշտ ու բավարար հիմք է ստեղծում՝ սովորողի բառակազմական կարողությունները զարգացնելու, ինչպես նաև բառիմաստը գիտակցորեն ըմբռնելու, յուրացնելու և վերջնարդյունքում այն խոսքում գիտակցորեն կիրառելու համար: Այսպիսով, ապահովվում է բառապաշարի խոսքակազմական քանակը, ոչ թե բառապաշարում բառերի սոսկ քանակն առհասարակ:

Մեր դասալսումների և փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա այս գլխում հիմնավորել ենք նաև, որ բարդ բառերի կազմության ուսումնասիրումը նպատակահարմար է սկսել պարզ արմատներից, որոնց համակցումով ստացված բառերում այդ արմատները միմյանց միանում են առանց հոդակապի և անհնչյունափոխ էլ մնում են: Մեր հետազոտության համատեքստում ներկայացրել ենք բարդ բառերի ուսումնասիրման մեր մշակած և փորձարարությամբ հիմնավորած մեթոդական քայլաշարը (պայմանավորված է *ա հոդակապի* առկայությամբ կամ առանց *ա հոդակապի*): Որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց՝ մենք կազմել ենք 1-4 դասարանների մայրենիի դասագրքերի բնագրերում գործածված բարդ բառերի ցանկեր՝ ըստ հոդակապով և անհոդակապ բարդությունների:

Երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման առնչությունները»** վերնագրով գլխի առաջին՝ **«Բառերի միջև քերականական հարցերի միջոցով կապեր ստեղծելու ունակության ձևավորման մեթոդական համակարգը»** վերնագրով ենթագլխում հիմնավորել ենք սովորողների՝ նախադասության մի անդամից այլ անդամին քերականական հարց առաջադրելու կարողության ձևավորման անհրաժեշտությունը: Այս շեշտադրությամբ էլ կազմել ենք նախադասության մի անդամից այլ անդամին քերականական հարց առաջադրելու մեթոդական քայլաշարի մոդելը:

Երկրորդ՝ «**Բնագրում գործածված բայերի շուրջ խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորման մեթոդիկան»** վերնագրով ենթագլխում կարևորել ենք սովորողների՝ բայից խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորման անհրաժեշտությունը, հիմնավորել ենք նաև մայրենիի դասագրքերում զետեղված բառարաններում, ինչպես նաև բնագրերի օժանդակ կառույցում բնագրերում գործածված բայերի կողքին անձնանիշ և իրանիշ խնդրառական հարցադրումները փակագծերում նշելու անհրաժեշտությունը՝ մեր իրականացրած փորձարարությամբ հիմնավորելով դրա արդյունավետությունը:

Երրորդ՝ **«Առարկայական զուգորդումների կիրառման մեթոդիկան բառուսուցման գործընթացում»** վերնագրով ենթագլխում անդրադարձել ենք տարրական դասարաններում դասավանդվող «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաների միջոցով սովորողների բառապաշարի հարստացման հնարավորություններին: Սովորողների բառապաշարի հարստացման շարունակականությունն ապահովելու նպատակով մենք

ուսումնասիրել, մշակել և կազմել ենք նաև 1-4-րդ դասարանների «Մաթեմատիկա» ու «Ես և շրջակա աշխարհը» առարկաների գործող դասագրքերի բառամթերքի ցանկեր՝ ըստ խոսքի մասերի, ըստ բառակապակցությունների, որոնք, լինելով պատրաստի և անսխալ կառույցներ, հիմնավոր նյութ են ուսուցչի համար՝ բնագրի շուրջ բառային տարաբնույթ աշխատանքների ընթացքում:

Չորրորդ՝ «**Հիմնախնդրի ուղղությամբ իրականացրած փորձարարությունն ու ընթացքը և արդյունքների հիման վրա մշակած մեթոդական երաշխավորությունները»** վերնագրով ենթագլխում ներկայացրել ենք տարրական դպրոցում սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ մեր իրականացրած գիտափորձերի վերլուծությունը, ամփոփել ենք արդյունքները, որոնց հիման վրա մշակել ենք մեթոդական երաշխավորությունները: Գիտափորձերի ընթացքում ներդրել ենք մեր մշակած մի շարք մեթոդական հնարներ, թեմատիկ բառաշարքերի ու լեզվական որոշ իրողությունների շուրջ տարաբնույթ աշխատանքներ և վարժությունների համակարգ, որոնք իրականացրել ենք հանրակրթական դպրոցներում գործող դասագրքերում ներառված ուսումնական նյութի՝ բնագրերի ուսումնասիրմանը զուգահեռ:

Գիտափորձի նպատակը

- Տարրական դպրոցի սովորողների համար նախատեսված թեմատիկ բառաշարքերում ներառել այնպիսի բառեր, որոնց գործածությունն այս կամ այն պատճառով սահմանափակ է, կամ սովորողները գործածում են դրանց օտար կամ խոսակցական համարժեքները:
- Հիմնավորել մեր մշակած համալիր վարժությունների համակարգով սովորողների բառապաշարի մաքրման և հարստացման գործընթացի արդյունավետությունը:
- Ապահովել կապակցված խոսք կառուցելու սովորողների կարողության զարգացումը՝ թեմատիկ բառաշարքերում բառեր ներառելով նաև տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաների դասագրքերում առկա բառապաշարից:
- Զարգացնել բառի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը, ձևավորել այն բավարարելու ուսումնական դրդապատճառներ:
- Զարգացնել աշակերտի բառազգացողությունը, ինչպես նաև սովորողների՝ քերականական հարց առաջադրելու կարողության ձևավորումը:

Գիտափորձերն անցկացրել ենք Երևանի Գ. Չաուշի անվան հ. 188 հիմնական դպրոցի 2-րդ (2ա ուս.՝ Տ. Գաբրիելյան, 2դ ուս.՝ Մ. Անանյան, 54 աշ.), 3-րդ (3բ ուս.՝ Ա. Բաբայան, 3գ ուս.՝ Ա. Մարտիրոսյան, 50 աշ.) և 4-րդ (4դ ուս.՝ Լ. Մովսիսյան, 4բ ուս.՝ Կ. Պետրոսյան, 51 աշ.) երկուական՝ ստուգողական և փորձարարական դասարաններում: Գիտափորձին մասնակցող դասարաններն ընտրվել են պատահականության սկզբունքով (ընդհանուր՝ 155 աշակերտ):

2-րդ դասարան

Ուսումնասիրելով 2-րդ դասարանի մայրենիի և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների դասագրքերում առկա թեմատիկ խմբերը՝ «ծառեր», «ծաղիկներ», «կենդանիներ», «թռչուններ» և այլն՝ 2-րդ դասարանում փորձարարությունը 4 փուլով իրականացրել ենք «Ծաղիկներ» թեմատիկ բառախմբի շուրջ: Առաջին փուլում, ուսումնասիրելով «Ծաղիկներ» թեմատիկ բառախմբից երկու դասարանների սովորողների իմացության և ճանաչողության նախնական մակարդակը, բացահայտել ենք, որ գիտափորձին մասնակցող բոլոր սովորողների բառամթերքը ծաղիկների տեսակներ նշանակող բառերի իմացության տեսակետից աղքատ էր: Առաջին փուլում ստուգվել է նաև փորձարարական և ստուգողական դասարանների սովորողների՝ բառակապակցություն կազմելու ունակության մակարդակը: Մեր հանձնարարությամբ սովորողներն իրենց կազմած բառակապակցություններից տասը պետք է գործածեին նախադասություններում. երկու դասարաններում էլ սովորողների մեծ մասը թույլ էր տվել ոճական, իմաստային սխալներ: Հետազոտության 2-րդ և 3-րդ փուլերում ցուցաբերել ենք աշխատանքի կատարման տարբերակված մոտեցում. մտապահման տարբեր մոտեցումների դեպքում նորածանոթ բառերի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով փորձարարական դասարանում ներդրվեց մեր մշակած վարժությունների համակարգը, կատարվեցին տարաբնույթ աշխատանքներ՝ հարցադրումային կաղապարներով: 4-րդ փուլում ստուգվեցին սովորողների բառապաշարի հարստացմանը միտված գիտափորձի արդյունքները (տրամ. 1, 2):

Տրամագիր 1

Ուսումնասիրության 4-րդ փուլում փորձարարական 2-րդ դասարանի աշակերտների՝«Ծաղիկներ» թեմատիկ բառաշարքից հատկանիշ ցույց տվող նորածանոթ բառերի գործածության արդյունքների հարաբերակցությունը



Տրամագիր 2

Ուսումնասիրության 1-ին և 4-րդ փուլերում փորձարարական 2-րդ դասարանում «Ծաղիկներ» թեմատիկ բառաշարքից աշակերտների կազմած բառակապակցությունների համեմատական բնութագիրը



Այսպիսով, 2-րդ դասարանում անցկացրած մեր փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց՝

- թեմատիկ խմբերով բառաշարքերով բառիմաստների յուրացման աշխատանքը միանշանակ արդյունավետ է և անհրաժեշտ,
- համակարգված ու մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքի ճանապարհով հնարավոր է հարստացնել սովորողների բառապաշարը և այն մաքրել օտարաբանություններից,
- սովորողները ձեռք են բերում իմացական, ճանաչողական գիտելիքներ և նորածանոթ բառերը խոսքում գիտակցորեն գործածելու կարողություններ,
- նվազում է նրանց թույլ տված ուղղագրական տարաբնույթ սխալների քանակը,
- կիրառված մեթոդները վերալրացնում են միմյանց՝ նպաստելով սովորողների բառապաշարի հարստացմանը, օտարաբանություններից մաքրմանը և խոսքի զարգացմանը:

3-րդ դասարան

Երրորդ դասարանում որպես **գիտափորձի նյութ** ընտրեցինք մայրենիի գործող դասագրքերում զետեղված բնագրերի բառապաշարից անկախ թեմատիկ «Խոհանոց» բառաշարքը: **Գիտափորձի խնդիրն** էր ստուգել սովորողների՝ առօրյա խոսք կառուցելու կարողության մակարդակը և հիմնավորել սովորողների բառապաշարի հարստացմանը միտված մեր մշակած վարժությունների համակարգի ներդրման արդյունավետությունը:

Առաջին փուլում մեր իրականացրած ուսումնասիրությունների միջոցով բացահայտեցինք, որ մեծ մասը չի տիրապետում խոհանոցային պարագաների անուններին, մասնավորապես զարգացած չէ նրանց՝ առօրյային առնչվող նկարագրական խոսք կազմելու կարողությունը՝ ի տարբերություն դասանյութի, որի շուրջ կատարվող բառիմաստի յուրացման գործընթացը և աշակերտի կողմից բնագրի բանավոր պատմումը վերահսկվում են ուսուցչի կողմից, մինչդեռ առօրյայում սովորողների խոսքը ուշադրությունից գրեթե դուրս է: Բացահայտեցինք նաև, որ սովորողների կազմած բառակապակցություններում սխալ կազմությունները մեծ մասամբ վերաբերում են *ինչի՞+առարկա* և *ինչպիսի՞+առարկա* ձևաբանական կաղապարներով կազմություններին: Առաջին փուլում ստուգվել է նաև փորձարարական և ստուգողական դասարանների սովորողների՝ ստացված բառակապակցություններից տասը նախադասություններում գործածելու կարողության մակարդակը: Արդյունքների վերլուծությամբ եզրակացրինք՝ քանի որ աշակերտների մեծ մասը հստակորեն չի պատկերացնում հատկանիշը առարկային վերագրելու և առարկային պատկանելություն ցույց տվող բառ վերագրելու իմաստային տարբերությունը (որը պայմանավորված է նաև հարցադրում առաջադրելու անկարողությամբ), ուստի նախադասություններ կազմելիս ոճական և իմաստային բազում սխալներ են թույլ տալիս: Փորձարարությունն իրականացվել է տարբերակված մոտեցմամբ. փորձարարական դասարանում ուսումնասիրության 2-րդ և 3-րդ փուլերում ներդրվել է մեր մշակած վարժությունների համակարգը: Արդյունքներն ամփոփվել են վերջին՝ 4-րդ փուլում (տրամագիր 3).

Տրամագիր 3

Ուսումնասիրության 4-րդ փուլում ստուգողական և փորձարարական 3-րդ դասարանների աշակերտների բառապաշարի հարստացման համեմատական բնութագիրը «Խոհանոց» թեմատիկ բառաշարքից



Ինչպես երևում է, փորձարարական դասարանի աշակերտներն առավելապես նշել են նորաձանոթ բառերը, որը վկայում է դրանց իմաստները գիտակցորեն յուրացնելու մասին: Ուսումնասիրության 4-րդ փուլում վերլուծել ենք նաև երկու դասարանների սովորողների՝ բառակապակցություններ կազմելու կարողությունները (տրամագիր 4).

Տրամագիր 4

Ստուգողական և փորձարարական 3-րդ դասարանների աշակերտների կազմած բառակապակցությունների վերջնարդյունքի համեմատական բնութագիրը



Այսպիսով, 3-րդ դասարանում մեր իրականացրած փորձարարությամբ հանգել ենք այն եզրակացության, որ բացառապես գործնական ճանապարհով և մեթոդապես միմյանց վերալրացնող ճիշտ կազմակերպված աշխատանքների միջոցով կարելի է հասնել սովորողների բառապաշարի հարստացմանը՝ *բառ → բառիմաստի գիտակցորեն ընկալում → բառիմաստի յուրացում → հարցադրման առաջադրում → բառակապակցության կազմում → բառակապակցության գործածում նախադասության մեջ → կապակցված խոսքի կազմում* աստիճանական զարգացման տրամաբանական շղթայով ուղղորդելով սովորողների՝ անսխալ և ճիշտ մտածելու կարողությունների ձևավորումը:

4-րդ դասարան

Մենք աշակերտների լեզվամտածողությունը զարգացնելու նպատակով մշակել ենք քերականական հարց առաջադրելու, մասնավորապես բայից խնդրառական հարց առաջադրելու կարողության զարգացման մեթոդիկան, որը փորձարկել ենք 4-րդ դասարանում՝ որպես **գիտափորձի նյութ** ընտրելով մայրենիի դասագրքում [Սարգսյան Վ. և ուր., Մայրենի 4, 2015] զետեղված «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը:

Առաջին փուլում բացահայտել ենք, որ աշակերտների՝ բայերի շուրջ ձևաիմաստային աշխատանք կատարելու կարողությունների մակարդակը ցածր էր. մեծ մասը չէր տարբերում գործողություն ցույց տվող բառերը, բայի հոմանիշը կամ հականիշը նշել էր այլ խոսքի մասերով կամ բառակապակցություններով, անգամ նախադասություններով (*կանգուն, գրքերով, ձիրքերով, մեզ հայ են ասում, քարից շինել):*

Ուսումնասիրության 1-ին փուլում բացահայտեցինք նաև, որ բավարար չէ աշակերտների՝ առաջարկված բայերի հականիշները նշելու իմացությունը. մեծ մասամբ նշել էին՝ բային չ ժխտական մասնիկն ավելացնելով *(կռվել–չկռվել (հաշտվել), կերտել-չկերտել (քանդել), գերել-չգերել (ազատել), տիրել-չտիրել (ազատել), ասել-չասել (լռել)),* չէին կարողանում հարցադրում առաջադրել բային և խնդիր-լրացմանը կամ պատասխանել տրված հարցադրմանը:

Փորձարարական դասարանում սովորողների՝ բայից խնդրառական հարց առաջադրելու կարողությունը զարգացնելու նպատակով գիտափորձի 2-րդ և 3-րդ փուլերում ներդրել ենք մեր մշակած վարժությունների համակարգը, ինչպես նաև հարցադրումային կաղապարներով իրականացրել լեզվական տարաբնույթ աշխատանքներ: Չորրորդ՝ վերջին փուլում ամփոփվել է վերջնարդյունքը (աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Ուսումնասիրության 4-րդ փուլում ստուգողական և փորձարարական 4-րդ դասարանների սովորողների աշխատանքների համեմատական բնութագիրը

Հանձնարարված բայեր	Ստուգողական դասարան	Փորձարարական դասարան
գերադասել	6,09%	10,1%
կերտել	5,28%	13%
աշակերտել	5,69%	11%
հեղել	6,09%	10,1%
տուժել	6,5%	8,9%
տիրել	5,69%	11,3%
ընդամենը	34%	65%

Հետազոտական աշխատանքի երկրորդ առաջադրանքի (տրված 6 բայերը գործածել «Հպարտ եմ, որ հայ եմ» կապակցված խոսքում) արդյունքների վերլուծությունը կատարել ենք՝ ստուգելով նախադասություններում հանձնարարված բայերի իմաստների ճիշտ և սխալ գործածությունը, ուշադրություն ենք դարձրել կապակցված խոսքի բովանդակալից շարադրանքին, ոճական կիրառությանը, շարադասությանը (աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Ուսումնասիրության 4-րդ փուլում ստուգողական և փորձարարական 4-րդ դասարանների սովորողների կապակցված խոսքում բայերի գործածության համեմատական բնութագիրը

Հանձնարարված բայեր	Ճիշտ գործածություն		Սխալ գործածություն		Ընդհանրապես չի գործածվել	
	Ստուգ.	Փորձ.	Ստուգ.	Փորձ.	Ստուգ.	Փորձ.
գերադասել	8,4%	11,7%	13%	5,2%	6,8%	6,1%
կերտել	10%	11,7%	7,8%	5,2%	6,8%	6,1%
աշակերտել	3,3%	8,4%	15,7%	7,8%	10,6%	8,3%
հեղել	5,8%	11,7%	10.5%	5,2%	9,9%	6,1%
տուժել	0,8%	6,7%	10,5%	5,2%	11,4%	10,6%
տիրել	8,4%	9,2%	10,5%	2,6%	7,6%	9,1%
ընդհանուր	36,7%	59,4%	68%	31,2%	53%	46%

Առաջադրանքների կատարման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ուսումնասիրվող բնագրի բայերի իմաստների յուրացումն ակնառու է փորձարարական 4-րդ դասարանում, որտեղ առաջարկվող բայերի գործածմամբ բովանդակալից նախադասություններ և անթերի կապակցված խոսք է հյուսել 18 աշակերտ, մինչդեռ ստուգողական 4-րդ դասարանում՝ 6 աշակերտ:

Այսպիսով, սովորողների խոսքն առավելապես զարգանում է բառակապակցություններ, նախադասություններ, կապակցված խոսք կազմելու ունակության ձևավորմամբ, որն էլ սերտորեն աղերսվում է հարցադրումային կաղապարների միջոցով քերականական հարց առաջադրելու կարողության զարգացմանը:

Եզրակացություններ

Մեր աշխատանքային փորձի և ատենախոսության հիմնախնդիրների շուրջ իրականացրած բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Վերլուծելով կրտսեր դպրոցականի բառապաշարի մաքրման ու հարստացման ուղղությամբ հայ և արտասահմանյան մեթոդիկայում կուտակված տեսությունն ու պրակտիկան, մեթոդներն ու երաշխավորությունները՝ հանգեցինք այն եզրակացության, որ դրանց մեծ մասն այսօր էլ արդիական է, ժամանակակից մանկավարժության կողմից հիմնավորված և ընդունելի, սակայն մայրենիի դասագործընթացն ունի կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման մեթոդների ու մեթոդական հնարների լրամշակման կարիք:

2. Բացահայտել ենք, որ աշակերտները հատկապես դժվարանում են գործածել այն բառերը, որոնք հասարակության կողմից կա՛մ քիչ են գործածվում, կա՛մ գրեթե չեն գործածվում: Բառիմաստների բացատրության ընթացքում դասագործընթացի շրջանակներում աշակերտների բառապաշարն ակտիվացնելու և նրանց խոսքում կիրառելի դարձնելու նպատակով անհրաժեշ է մայրենիի դասագրքերում ներառել ուսումնական բնագրերին համապատասխան օժանդակ բառերի թեմատիկ շարքեր՝ սովորողների համագործածական բառապաշարը հարստացնելու համար:

3. Բառերի ձևաիմաստային խմբերի շուրջ բառային աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է՝ սովորողների՝ հոմանիշ-հականիշ բառազույգեր կազմելու կարողության զարգացումը մասնավորապես *ածական+գոյական, մակբայ+բայ* ձևաբանական և հարցադրումներով կազմված կաղապարներով աշխատանքներ իրականացնելով: Առաջնային խնդիր է հոմանիշ-հականիշ բառերի և կապակցված խոսքում դրանց ոճական ճիշտ կիրառությանը ուշադրություն դարձնելը՝ հոմանիշ զույգերի կամ հականիշների շուրջ աշխատանքն ամրապնդելով խոսքիմասային պատկանելության պահպանմանն ուղղված կրկնակի հարցադրումներով՝ առարկա՝ *ի՞նչ-ի՞նչ*, հատկանիշ՝ *ինչպիսի՞-ինչպիսի՞*, *ո՞ր-ո՞ր*, գործողություն՝ *ի՞նչ անել-ի՞նչ անել, ի՞նչ լինել-ի՞նչ լինել*:

4. Բառակազմական կաղապարներով վերլուծությունները խթանում են արմատները և իմաստաարտահայտիչ ածանցները գիտակցելու, յուրացնելու և կիրառելու սովորողների կարողության ձևավորումը, նպաստում բառիմաստի յուրացմանը: Ուստի՝ անհրաժեշտություն է բառակազմական ունակությունների զարգացման մեթոդիկայի կատարելագործումը՝ բառակազմական կաղապարներով:

5. Առաջնային խնդիր է նախադասության անդամներին քերականական հարց առաջադրելու՝ կրտսեր դպրոցականի կարողության ձևավորման մեթոդիկայի կատարելագործումը, քանի որ այն ինչպես խոսքի զարգացման, այնպես էլ վերացական և տրամաբանական լեզվամտածողության ձևավորման կարևոր գործոն է:

Առաջարկություններ

Ուսումնասիրելով և վերլուծելով ժամանակակից տարրական դասարանների սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ կիրառվող մեթոդներն ու մեթոդական հնարները, գործնական ճանապարհով լեզվական իրողությունների ուսուցման արդյունավետ ուղիները՝ մեր ատենախոսության հիմնախնդիրների շուրջ իրականացրած բազմակողմանի ուսումնասիրությունների և մշակած վարժությունների համակարգի կիրառման արդյունքների վերլուծության հիման վրա ներկայացրել ենք նաև մի քանի առաջարկություններ.

1. Մայրենիի դասագրքերում հայրենիքի, բնության, մայրության և գաղափարադաստիարակչական այլ թեմաներով բնագրերին զուգահեռ ներառել սովորողների համագործածական բառապաշարը հարստացնող թեմատիկ բառաշարքեր՝ դրանցով նկարագրական խոսք կառուցելուն միտված մարզողական և կիրառական վարժություններով:

2. Սովորողի բառապաշարի հարստացմանն ուղղված աշխատանքի արդյունավետության նպատակով դասագրքաստեղծ խմբերին առաջարկում ենք մայրենիի և «Ես և շրջակա աշխարհը» դասագրքերի բնագրերին կից ներառել «Հենակետային բառեր» ենթակետը՝ նորածանոթ բառերով և թեմատիկ բառախմբով, իսկ մայրենիի դասագրքերի լեզվական ու քերականական, բառակազմական վարժություններն ու առաջադրանքները հիմնականում կազմված լինեն դրանց շուրջ: «Հենակետային բառերի» առանձնացումն ու դրանց շուրջ աշխատանքը ոչ միայն նպաստում է սովորողների ուշադրության կենտրոնացմանը, բառապաշարի հարստացմանը, այլև համադրական մտածողության ձևավորմանը:

3. Նկատի ունենալով կրտսեր դպրոցականի լեզվամտածողության ձևավորման գործում քերականական հարց առաջադրելու սովորողի կարողության կարևորությունը՝ մայրենիի դասագրքերի բառարաններում, ինչպես նաև բնագրերի մեթոդական կառույցում ուսումնական նյութի շրջանակում գործածված բայերի խնդրառական հարցերը գրել փակագծերում: Յուրաքանչյուր բայի կողքին փակագծերում նշված անձնանիշ և իրանիշ խնդրառական հարցադրումները կուղղորդեն սովորողներին՝ գործողությունն ու խնդիրը ճիշտ հոլովով կամ կապական կառույցով կապակցելու և խոսքն անսխալ կազմելու կարողության ձեռքբերմանը, խոսքային կարողությունների ձևավորմանը:

4. Բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման շուրջ աշխատանքի ընթացքում ներդնել բառակազմական, ձևաբանական, հարցադրումային կաղապարների համակարգ՝ սովորողների՝ հարցերի միջոցով լեզվական մտահանգումներ կատարելու և նախադասության անդամներին քերականական հարցեր առաջադրելու կարողություն ձևավորելու նպատակով:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Բառազգացողության ձևավորման գործընթացը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ընթացքում, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (40-41), Զանգակ հրատարակչություն, Եր., 2013, էջ 179-185:

2. Կրտսեր դպրոցականի գեղարվեստական մտածելակերպի ձևավորումը, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (50-51), Զանգակ հրատարակչություն, Եր., 2013, էջ 79-83:

3. Միջառարկայական կապերի դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման

գործընթացում, Տաթև գիտակրթական համալիր, «Մանկավարժական միտք» 3-4 (54-55), Զանգակ հրատարակչություն, Եր., 2014, էջ 212-220:

4. Կրտսեր դպրոցում բառակազմական վերլուծությունը որպես բառապաշարի հարստացման միջոց, Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում, աշխատաժողովի թեզիսների ժողովածու, Մանկավարժ, Եր., 2014, էջ 97-99:

5. Հոմանիշների և հականիշների ուսուցումը որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման միջոց, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (56-57), Զանգակ հրատարակչություն, Եր., 2015, էջ 208-215:

6. Դարձվածքների և շրջասույթների ուսուցումը որպես բառապաշարի և խոսքի հարստացման միջոց, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 3 (58), Զանգակ հրատարակչություն, Եր., 2015, էջ 197-203:

7. Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ուղիները կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (64-65), Զանգակ հրատարակչություն, Եր., 2017, էջ 166-171:

8. «Մաթեմատիկա» և «Մայրենի լեզու» միջառարկայական կապի դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործընթացում, Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (66-67), Զանգակ հրատարակչություն, Եր., 2017, էջ 123-126:

9. Բառակազմության ուսումնասիրման պրակտիկան արդի տարրական դպրոցում, Գիտական հոդվածների ժողովածու, «Ակունք», թիվ 2 (18), ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2018, էջ 140-149:

ТОРУНЯН НАИРА АРАРАТОВНА

Методика обогащения лексики родного языка для младшего школьного возраста

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 «Методика преподавания и обучение» (армянский язык). Защита диссертации состоится 21-ого июля, 2021г., в 12^{00} часов, на заседании специализированного совета «Педагогика» 020 ВАК РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна.

Адрес: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

В диссертации рассматриваются проблемы обогащения лексики школьников младшего возраста.

Актуальность исследования. Бесспорно, что в каждый период появляются новые задачи, которые диктуют необходимость современного решения данной проблемы.

В конце прошлого века работы по обогащению словарного запаса учеников все еще были под контролем- в разных слоях общества речь была сравнительно чистой, телевидение и пресса проходили строгую цензуру, не было общения учащихся в социальных сетях с помощью компьютера. Сложившаяся ситуация, в первую очередь, подрывает формирование языкового мышления нового поколения, искажает его представления о языковом вкусе, критериях выражения речи, что ведет к нарушению лексики учащихся.

Известно, что школьники являются самыми уязвимыми в общественной группе. Сейчас по разным каналам транслируются фильмы, развлекательные передачи, где мы слышим недостойные выражения. Нужно активно или пассивно бороться с тем, чтобы каждый учащийся начальных классов “не уходил” от могучего армянского языка, создавая нищенскую лексику с примитивным запасом слов.

В тоже время, по требованию новых социально-экономических, общественно-политических условий активизировались такие сферы жизни как деловые связи, фактология и др., в основе которых лежат коммуникативные способности личности, формирование которых трудно представить без гибкого и профессионального использования языка коммуникаций, богатого словарного запаса, образного и убедительного слова, которые являются важным залогом успеха и конкурентоспособности в условиях сверхскоростного развития техники владения необходимой информацией и возможностями быстрого реагирования.

Таким образом, актуальность нашей темы обусловлена необходимостью развития коммуникативных возможностей современного поколения и совершенствованием содержания и методов работы по обогащению словарного запаса учащихся в этом контексте.

Цель исследования:

Целью нашего исследования является разработка и внедрение в процесс обучения родному языку эффективного методического комплекса, направленного на обогащение лексики младших школьников.

Задачи исследования:

Для реализации указанной цели мы поставили перед собой следующие задачи:

1. Изучить, классифицировать и проанализировать отечественные, теоретические и практические основы методики обогащения лексики, представленной в отечественной и зарубежной научной-методической литературе.
2. Выявить недостатки речи младших школьников, трудности построения речи.
3. Разработать, экспериментально обосновать и внедрить систему упражнений, способствующих обогащению словарного запаса учеников в процессе работы над прочитанными оригинальными текстами, применяемыми как в начальных, так и в средних и старших школах.

Научная новизна исследования – внедрение нового методического комплекса, направленного на непрерывность и эффективность обогащения лексики школьников как в начальных, так в средних и старших классах.

Теоретическое значение исследования:

Анализ новых эффективных педагогических стратегий обогащения армянской и зарубежной методической и педагогической литературы, а также словарного запаса младших школьников.

Практическое значение исследования обусловлено эффективной практической методикой и обоснованным экспериментом. Разработанные методические рекомендации, результаты исследования могут быть применены в начальных классах в процессе работы в рамках прочитанного оригинала, на курсах переподготовки учителей и авторов учебников, а также в ходе различных научных исследований.

Структура и объем диссертации:

Работа состоит из введения, 3 глав, заключения, рекомендаций, библиографии и приложений. Она содержит 11 таблиц, 25 диаграмму, 2 графических изображений. Основное содержание диссертации изложено на 164 компьютерных страницах.

По теме диссертации опубликованы девять научных статей.

NAIRA TORUNYAN

VOCABULARY ENRICHMENT METHODS FOR NATIVE LANGUAGE TEACHING PROCESS IN PRIMARY SCHOOL

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 ‘‘Teaching and Education Methodology’’ (Armenian language). The defence of the thesis will be held at SCC of RA 020 degree-awarding scientific council’s session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on 21 July, 2021, at 12^{00}.
Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

Summary

This dissertation discusses the problems of enriching the vocabulary of primary schoolchildren.

The relevance of the research.

It is indisputable that in each period of time new educational problems arise, which dictate the necessity of modern solutions. Therefore, if at the end of the last century the methods for enriching the vocabulary of students were still under control, the speech was relatively pure in different segments of the society, also the language appearing on television and in media was controlled, there were no opportunities for students to communicate through social networks on computer, at present the purity of speech in instances has been distorted and most importantly has come out of control. First of all, the current situation hinders the Armenian way of thinking, the formation of linguistic thought of the new generation, distorts their perceptions about linguistic taste and speech quality criteria: not only the vocabulary of the students is affected, but also the linguistic style and thinking are affected too.

It is known that students, especially school age children, are the most vulnerable group in the society. At present the individual language and style of the students of primary school are gradually “moving away” from the literary language due to both actively and passively adopting the poor language from movies and entertainment programs broadcast on various TV channels, the vocabulary of the children has become poor and the speech imperfect. At the same time, due to the modern socio-economic and socio-political conditions some segments of various spheres of life have become quite active: business relations, advocacy, business communication, marketing, insurance, pedagogy, medicine, etc., which are based on individual’s communication skills, the ability to communicate is difficult to imagine without the flexible and professional use of language, that is communication, without rich vocabulary, without graphic and persuasive speech, which are one of the key guarantees of success and competitiveness. At the same time it is undeniable that as a result of media education the majority of modern students stand out for having original thinking, ability to master and quickly respond to the necessary information in superfast technological development processes.

Therefore, the *relevance* of our research is conditioned by the necessity of developing the communication skills of the new generation and in this context by improving the contents and methods of the work carried out for enriching the vocabulary of students.

The goal of the research is to develop and represent methodological complex in the Armenian language course aimed at enriching the vocabulary of children in primary school in the native language teaching process.

The objectives of the research:

To achieve this **goal** we have set the following tasks presented below:

1. We have studied, classified and analysed the theoretical and practical bases of vocabulary enrichment methods for students presented in national and foreign scientific and methodological literature.
2. As a result of our class assessments, we have identified the shortcomings of the speech of primary schoolchildren, their difficulties of building speech and we have determined their causes.
3. While working on the original text, we have developed, experimented and introduced a system of

exercises that help “to purify” and improve the vocabulary of learners.

4. We have summarised the results of our experimental research on enriching the vocabulary for primary schoolchildren and developed methodological guarantees while working on the original text.

We have implemented theoretical and experimental methods in solving the set tasks.

The scientific novelty of the research is the eleboration of a new methodological complex that ensures the continuity and efficiency of enrichment of the vocabulary of primary schoolchildren, which is applicable in primary, as well as in secondary schools.

The theoretical significance of the research is the new analysis of the Armenian and foreign methodological and pedagogical literature, as well as new effective pedagogical mechanisms for enriching the vocabulary in Armenian primary school.

The practical significance of the research is due to the effective practical methodology proving by experiment and this has become the basis for developing the methodological guarantees, which can be used in elementary school working on original text, for specialist groups in writing manuals, in teacher training courses, as well as in various scientific studies.

The structure and volume of the thesis.

The thesis consists of an introduction, 3 chapters, conclusions, suggestions, bibliography and appendices. It contains 11 tables, 25 diagrams, 2 charts. The total volume of the dissertation is computer 164 pages.

On the topic of the thesis nine scientific articles are published.